
ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԸ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ Կ. Լ.

XX դարասկիզբը գրական արևմտահայերենի համար հետաքրքիր, եռուն, բայց նաև խիստ հակասական շրջան էր: Համիդյան բռնապետությունը գիտության, արվեստի, լեզվի, գրականության և այլնի զարգացման համար ստեղծել էր ամենաանբարենպաստ պայմանները: Գրաքննությունը Պոլսում հասել էր բացարձակ անհեթեթության: Միյուրքահայ ավագագույն գրողներից մեկը՝ Լևոն Մեսրոպը, վկայում էր, որ «քրեական յանցանք էր», օրինակ, «Հայաստան» բառը գործածելը: «Ազգին տեղ հազիւ թոյլատրելի էին «տոհմ», «ցեղ» և «համայնք»: «Աղբերց արին» բոյսի մը գաւառական անունը պատճառ դարձաւ գրողին և տպագրողին բանտարկութեան, թարգմանուելով «եղբօր արին» կամ «հայկական ջա՛րդ»... Ասպարէզը մնաց Մ. Պարսամեանի, Հ. Նազարեանի նման «բանաստեղծներու», որոնք եւրոպական խոհանոցին կեղծ-ռոմանթիք, հիւանդագին նորութիւնները կը կապկէին, ոչ մէկ կապ ունենալով հայ ժողովուրդին կեանքին ու հոգեբանութեան հետ, եւ անտաղանդ ու ապիկար գրչակներու, որոնք «հրապարակագրութիւն» կ'ընէին սիւնակներ լեցնելով ջոջ մարդոց յուղարկաւորութեան, հարսանիքին, կնունքին կամ թաղական աղաներու կռիւներուն նկարագրութիւններով»¹:

Մյուս կողմից, արևմտահայ գրականության կարկառուն ներկայացուցիչները հիմնականում ստեղծագործում էին արտերկրում. նրանց ջանքերի շնորհիվ նաև արևմտահայերենը հասավ իր բարձրությանն իբրև գրական լեզու:

XX դարասկզբի արևմտահայ ականավոր քնարերգու Միսաք Մեծարենցն ապրում ու ստեղծագործում էր Պոլսում, այլ խոսքով՝ բուն դժոխքում՝ «տիղմի», գրաքննության, մանր ու մեծ դավադրություններով հագեցած միջավայրում, որի հետ նա պարզապես չէր կարող հակասություններ չունենալ: Հետաքրքրական է, որ առաջին ընդհարումը այդ միջավայրի ակնառու ներկայացուցիչ, «Մասիս» հանդեսի խմբագիր Ենովք Արմենի հետ պատանի բանաստեղծն ունեցել է հենց լեզվական խնդրի առնչությամբ:

Մեծարենցի անդրանիկ ժողովածուի՝ «Ծիածանի» տպագրությունն սկսվեց 1907 թ. մարտին: Ժողովածուն պետք է հրատարակվեր ««Մասիսի» մատենադարան» մատենաշարով՝ իբրև առաջին հատոր, սակայն դա տեղի չունեցավ, ինչի մասին «Մասիսը» պարզաբանեց. «Ծանուցած էինք թեև, թե «Մասիսի» մատենադարանին առաջին հատորը պիտի կազմե ան, սակայն տիրոջը հետ գեղարվեստական խնդրի մը մասին անհամաձայնության պատճառով, նախընտրեցինք մատենադարանին չկցել հրատարակությունը»²: Այս գեղարվեստական խնդրին հեղինակն անդրադառնում է իր «Քննադատությունը» հոդվածում՝ գրելով. «Տեսնենք նախ թե ի՞նչ կ'ըմբռնե Ենովք Արմեն

¹ Լևոն Մեսրոպ, Միսաք Մեծարենցի վերածնունդը (Ծիրանի գոտի, հանդես, Պոսդոն, 1959, - 4, էջ 40-41):

² Մասիս, շաբաթական հանդես, Կ. Պոլիս, 1907, - 26, էջ 528:

գեղարվեստ բառով: Երբ Ենովք Արմենի փափաքով (այն ատեն երևի մոլար կապկոդ մը չէի) հոժարեցա «Մասիսի մատենադարանին մեջ հրատարակել Ծիածանը՝ այս վերջինին կցվելու համար ազդ մը խմբագրեց «Մասիս»-ի խմբագիրը. այս ազդեն մաս մը կ'արտագրեմ, իբրև նմուշ հեղինակին լեզվական գեղարվեստին:

...Հիմնած ենք «Մասիսի» Մատենադարանը», որուն լույս կ'ընծայենք Առաջին հատորը, Ծիածան, իբր սկզբնավորություն Մատենադարանի շարքին:

Ես չկրցա հանդուրժել այս ճոգած հայերենով ազդին՝ զոր Ենովք Արմեն կ'ուզեր անպատճառ գետեղել զրքին ճակատը, հառաջաբանեն իսկ առաջ: Որուն լույս կ'ընծայենք առաջին հատորը (*dont nous publions le premier volume*), ահա՛ վասիկ, ո՛ր պետք է փնտռել մոլար կապկությունը. հայերեն մը՝ որ իսկենիսկ ֆրանսերենին վրա ձևված ըլլա»³:

Այս «լեզվագեղարվեստական» խնդիրը միակը չէր, որին անդրադարձել կամ ստիպված է եղել անդրադառնալ Միսաք Մեծարենցը: Ժամանակի «քննադատները» երբեմն-երբեմն մեղադրում էին Մեծարենցին զանազան, այդ թվում՝ լեզվական «զանցանքների» համար, որոնց ի պատասխան բանաստեղծը հանդես եկավ իր մի քանի՝ «Ինքնադատության փորձ մը «Ծիածան»-ին առիթով», «Քննադատությունը», «Հետամնաց բարեկենդան», «Աղեղ ու կապարձ», հոդվածներով՝ ի հայտ բերելով ոչ միայն տաղանդավոր գեղագետի, քննադատի, այլև լեզվամտածողի ունակություններ:

Նույն Ենովք Արմենը, որ «Գրական նոր հոսանքի փորձ մը» հոդվածում Մեծարենցին համարում էր «մոլար կապկոդ» կամ սիմվոլիզմի «ջերմեռանդորեն ուխտադիր ռահ-վիրա», «մոլեռանդ առաքելության» դերն ստանձնող⁴ և այլն, ուներ իր «լեզվափիլիսոփայությունը», ինչի մասին Մեծարենցն ակնարկում է «Հետամնաց բարեկենդան» հոդվածում. «Ինչ են այն խոշոր բառերը՝ (ռահվիրա, ռահահորդ, առաջավորդ, առաքյալ) զորս անունիս կցելու տխրահոջակ պատիվը կ'ընեն. չէ՛, ես լեզվական առաքելության փառատենչիկ ցանկացողներուն կը թողում այդ բոլոր լպրծուն տիտղոսները» (276): Խոսքը «Մասիսի» խմբագրի՝ «Կինը» պատմվածքների ժողովածուի մասին է, որ լույս է տեսել Պոլսում 1906-ին: Ենովք Արմենը գետեղել էր մի պատմվածք՝ «Գեշ կաթ» վերնագրով, որի տողատակի ծանոթագրության մեջ նշել էր. «Աս պատմվածքը՝ լեզվական փորձի մը համար՝ հրատարակված է լեզվական ուղղութիւնով մը՝ որը հեղինակը կը դաւանի թէ՛ պիտի ըլլա Ապագա Աշխարհաբարը: Կը զգա թէ՛ աս փորձին մեջը՝ ներդաշնակութիւնը, ականջի վարժութիւնը, ձայներու երաժշտականութիւնը՝ զոհւած են լեզվական նրբախոյզ խստութիւնով կանոնականութիւնի մը...»⁵:

Ստորև մեջբերում ենք մի նախադասություն այդ պատմվածքից՝ հայցելով ընթերցողի ներողամտությունը. «Աչքէ ձգւած, բաղդին հարւածովը բիրտօրէն լքւած տարաբաղդ որբ մըն էր ինք, որ մայրին մեռնելէն ետքը, եկած է ապաստանիլ ադ անշուր

³ Միսաք Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Ե., 1981, էջ 261: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

⁴ Մասիս, 1907, - 47, էջ 939, 940:

⁵ Ենովք Արմեն, Կինը, Կ. Պոլիս, 1906, էջ 81:

երդիքին տակը, իր թշուառ օրերը անցընելու համար, մանկամարդ կինի մը հետը, որ իր մօրաքոյրն է»⁶:

Մեծարենցը չէր կարող հանդուրժել լեզվական նման զարգացումները, մանավանդ որ հրաշալի գիտեր գրաբարը և պաշտամունքի հասնող սեր էր տածում մեր ոսկեդինիկ լեզվի հանդեպ: Ժամանակակիցների վկայությամբ՝ «Մեծ նախասիրություն մը ուներ գրաբարին համար, զայն դավանելով լեզվի գեղեցկագիտության անսպառ աղբյուր մը և Նարեկին հետ կկարդար գրաբար Աստվածաշունչը, որոնք թերևս իր կրոնական զգացումներուն ալ կը խոսեին: Չէր անտեսեր գավառական բարբառը: Նոթատետրի մը մեջ ընդօրինակած էր ժողովրդական երգեր»⁷:

Գրաբարի, նաև աշխարհաբարի հանդեպ իր վերաբերմունքի, մայրենիի վաղվա օրվա մասին պատկերացումների ու տեսլականի, ինչպես նաև գրականության անդաստանում լեզուն աղավաղողների գործած մեծ վնասարարությունների առնչությամբ Մեծարենցը գրել է, որ Ենովք Արմենը, ինչպես և շատ ուրիշեր, լեզվի հանդեպ մտահոգություն չունեն և արհամարհում են գրաբարը, սակայն նկատելի է, որ աշխարհաբ արը դեռևս «ինքնուրույն, կազմված նկարագրով» լեզու չէ, և «...մոլար կապկություն է զայն եվրոպական լեզուներու վրա ձևելը. օգտվենք եվրոպական լեզուներու նորանոր ու թարմ արտահայտություններեն, բայց չմոռնանք գրաբարին հուրթի շտեմարաններեն օգտվիլ մանավանդ: Ինչո՞ւ մեր հացը գետին ձգենք ու մուրացիկ՝ ուրիշին ետևեն վազենք... Կրնա առարկվիլ թե ի՞նչ հարկ կար այս որակներով ա՛յսքան զբաղելու: Բայց այս պղծագործությունները նվիրագործություն սեպվելու հավակնությունը ունին, ու մեղապարտ ու ցասուցիչ ա՛յսքան լռությունները վերջ, պետք էր որ հանուն գրականության և հանուն ցեղին լեզվական արժանապատվության ձայն մը բարձրանար գոնե...» (262):

Ասվածներից պետք չէ եզրակացնել, թե հեղինակը գրաբարյան ձևերին ու կազմություններին նախապատվություն էր տալիս պատեհ ու անպատեհ առիթներով: Սրանում կարելի է համոզվել բնագրային մի քանի վկայությունների օգնությամբ: Առավոտի գաղափարն արտահայտելու համար, օրինակ, Մեծարենցն իր չափածոյում օգտագործել է հետևյալ բառերը՝ **այգ, առտու, արշալույս, արևագալ, վաղորդյան: Առտուն**, որ կիրառվում է սոսկ արևմտահայերենում և պատկանում է բառաշարի չեզոք շերտին, գործածված է 25 անգամ, **այգը՝ 19, արշալույսը՝ 3: Արևագալ և վաղորդայն** բառերը, որոնք առավելապես գործածական էին գրաբարում և շատ ավելի քիչ՝ նոր գրական հայերենում, կիրառված են մեկական անգամ, ինչից երևում է, որ հեղինակը նախապատվությունը տալիս է լեզվի տվյալ փուլին հասունկ բառերին:

Սրանում կարող ենք համոզվել՝ կարդալով նաև «Արևագալ» բանաստեղծության տարբերակները: Ոտանավորի երկրորդ տան առաջին երկատողը նախապես եղել է՝

⁶ Նույն տեղում, էջ 81-82:

⁷ Գեղամ Բարսեղյանի հուշերից (Միսաք Մեծարենցը և Դանիել Վարուժանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1986, էջ 113):

Կենդանություն կը զգենուն դաշտ ու լեռներք,
Ցնծուն երգերը միշտ կը լսվին գեղջուկին (323):

Մշակումից հետո դարձել է.

Կենդանություն կը հագնին դաշտ ու լեռներ,
Զվարթ երգերը միշտ կը լսվին գեղջուկին (18):

Գրաբարի հանդեպ նման մոտեցումը արևմտահայ բանաստեղծների շրջանում եզակի չէր: Գրեթե նույն ժամանակ նմանատիպ կարծիք էր հայտնում Դանիել Վարուժանը: Իր «Միամանթոյի քերթողությունը» հողվածում, ի թիվս այլոց, անդրադառնալով Միամանթոյի լեզվին՝ Վարուժանը գրում է. «Յարճանյանի աշխարհա-բարը բավական նման է իր անձին, խրոխտ, ճկուն և վայելուչ: Բարեկեցիկ լեզու մըն է՝ չըսելու համար հարուստ: Իր դուրսագները ևս կարծես ավելի հզոր պիտի ըլլային, եթե զանոնք քիչ մը ավելի հագվեցներ գրաբարին պղնձի բովեն հանված զենուզարդով, մարտագոռ բառերով, հստակ ասացվածքներով: Այն աստեն պիտի տեսներ որ նոր բառեր կերտելու ձանձրությին ալ տեղի պիտի չմնար այլևս»⁸:

Մամուլի էջերում մղվող բանավեճերը չեն շրջանցում Մեծարենցի բառապաշարի և բառընտրության հարցերը: 1908 թ. մարտին Ժակ Սայապայանը՝ առավել հայտնի «Փայլակ» կեղծանվամբ, «Արևելք» հանդեսում հրատարակում է «Նոր տաղեր» ժողովածուին նվիրված մի գրախոսական, որում որևէ արժեք չէր տեսնում Մեծարենցի քնարի մեջ, ինչին ի պատասխան բանաստեղծը «Հետամնաց բարեկենդան» հողվածում գրում է. «Դիտելի է, որ Փայլակի իբրև անճաշակ դատապարտած բառերը՝ առավելապես նախնայաց մատենագրության մեջ գործածվածներ են. բառերն՝ որոնք ամենքն ալ գեղեցկության քվեն չեն ստանար Փայլակի կողմեն, վասն զի «շիք» չեն, «սիրուն» չեն, «moderne» չեն, այլ նախնի մատենագրության մեջ հաճախված, «բրածո» բառեր են ...այդ բառերը գործածող նախնի մատենագիրներ՝ մենե շա՛տ ավելի լավ կ'ըմբռնեին լսելության և առողջանության գեղեցիկը...» (275):

Նկատենք, որ հայ մատենագիրների կիրառած բառերից փող-փողենեջ-ն օգտագործված է Նարեկացու տաղերում, ճաճան-վուխտ-ը՝ Աստվածաշնչում՝ Եզեկիելի մարգարեության մեջ, լռա-բան-ը՝ Նարեկացու Մատյանում, կղկաթիմ-ը՝ Հովհան Ոսկեբերանի մեկնության մեջ, վարսաղիտակ-ը՝ «Ճառընտիրում», զարմանուհի-ն՝ Նարեկացու «Գանձ ի սուրբ եկեղեցույ» մեջ, բազմագեղուն-ը և բազմաբեղուն-ը՝ Նարեկացու Մատյանում⁹:

⁸ Դանիել Վարուժան, Երկեր, Ե., 1946, էջ 360-361:

⁹ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, Ե., 1979, էջ 904, 1103, 722, 404, 402, հ. II, Ե., 1981, էջ 953, 168, 798:

Իր գրախոսականում Փայլակը նշում էր նաև հազվադեպ գործածություն ունեցող բառերի մասին, որոնց իմաստը չէր հասկանում: Դրանցից է «լուրջ» ածականը՝ մեկն այն գունանուններից, որոնք առանձին հմայք են հաղորդում Մեծարենցի քնարերգու-թյանը: Այս բառի ծագման, ստուգաբանության և բացատրության վերաբերյալ բառարանագիրներն ունեն տարբեր կարծիքներ: Նոր Հայկազյան բառարանում կարդում ենք. «Լուրջ-Լուրթ, որպես բաց կապոյտ... Ասմագուն (այսինքն երկնագոյն), լուրջ շուշան ծաղիկ, որ է կապոյտ շուշանն, սուսամ...»¹⁰:

Աճառյանը գրում է. «Լուրթ, նոյն է ընդ Լուրջ, նշանակութեան կողմից ընդարձակ զարգացում կրած մի բառ է: Առաջին և հիմնական նշանակութիւնն է «պայծառ, բաց, ոչ-մուրթ, ոչ-խիստ, նուրբ» (օղի, լոյսի, գոյնի և յատկապէս՝ կապոյտ գոյնի բացութեան համար գործածուած), որից լրթանալ «բացուիլ, մթութիւնը պարզուիլ»»¹¹:

Ստեփանոս Մալխասյանցը, բացի վերը նշվածներից, լուրջ գունանվանը հատուկ է համարում նաև «մուրթ», «սև», «թուխ» իմաստները՝ հավանաբար հենվելով Հին Հայկազյան բառարանի տվյալներին¹²:

Գևորգ Ջահուկյանը գրում է. ««Լուրջ, -ի, -աց, «պարզ, բաց, բաց կապույտ, պայծառ, ուրախ, զվարթ, պայծառամիտ, արթուն, զգոն, սթափ, լուրջ»»¹³:

Հեղինակն իր ողջ չափաժողովում բառն օգտագործել է երկու անգամ՝ տարբեր իմաստներով: Մի դեպքում («Այգային» բանաստեղծության մեջ) այն կապույտի հոմանիշ է և մեծապես նպաստել է առավոտի գեղեցկության, զարթոնքի և ցնծության գեղարվեստական նկարագրությանը.

Աղբյուրին լուրջ ջուրերուն մեջ ճառագայթ մը կ'իյնա շեղ,
Աղբյուրին հարթ քարին վըրա՝ ձայնն հոտաղին երգեցիկ,
Աղբյուրին զով ծորակին հուպ՝ համբույրն հովին առտըվան...(106):

Մյուս դեպքում («Անձրև» բանաստեղծության մեջ), այն կիրառված է «լուրջ շուշան» բառակապակցության մեջ՝ դարձյալ բնության գովերգման, անձրևոտ գիշերվա բերած իսաղաղության և բնության ու մարդու անքակտելի միասնության համատեքստում.

Օ՛հ, աս ի՛նչ գրգանք, օ՛հ, աս ի՛նչ անուրջ,
Որ կը տամկանա, գաղտ ու հապըշտապ,
Իմ ծարավահյուծ, իմ որբնայրի
Իրիկուններու շուշանին վրա լուրջ (99):

Փայլակի գրախոսականին ի պատասխան Մեծարենցը գրում է. «Հետո կ'ըսե անպատկառ ու անպարկեշտ տգիտությամբ. – «Լուրջ» իբր «անուրջ»-ին հանգ կ'երթա,

¹⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, էջ 903:

¹¹ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. II, Ե., 1973, էջ 304:

¹² Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. II, Ե., 1944, էջ 218:

¹³ Ջահուկյան Գ., Հայերեն աստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 303:

բայց շուշանին ածական տալ ուզելնուդ պես, լրջության վերարկուն կը նետե վրայեն ու բարե-կենդանի «մասկարա» կ'ըլլա կարծես... Լուրջ՝ կը նշանակե երկնագույն, իսկ լուրջ շուշան՝ հիրիկ զամբագ, iris»(273-274):

Բառի այս բացատրությունը, գրեթե նույնությամբ, հետագայում տալիս է «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը»¹⁴: Մյուս «վիճահարույց» բառը «ցնծապատարն» էր: Այն Մեծարենցի չափաձոյում օգտագործվել է մեկ անգամ դարձյալ հեղինակին հարազատ թեմայի՝ մարդ-բնություն փոխհարաբերության ու միասնության համատեքստում.

Եվ արն ին կըսպասեմ ես ցնծապատար,
Միտքս երագով լեցուն համակ, ձեռքս ծափո՜վ.
Ունկնդրելու զանգակն անոր պատարագին... (100)

Ու այստեղ ևս «Փայլակ կը կրկնե, միևնույն անպատկառ ու անպարկեշտ տգիտությամբ. - «...Ցնծապատար»-ը (այսինքն՝ ցնծապատար) «լեղապատառ»-ին վրա ձևեր ես (այսինքն՝ լեղապատար) «տա-«ռ»-ին) դերձակի մը պես որ կյանքին մեջ առաջին անգամ «Ֆրագ» մը կը շինե ինչ որ «էնթարիի» մը կը նմանի:

Հոս Փայլակ դպրոցականն մը շա՛տ վար կը մնա, դպրոցական մը բառարան նայիլ գիտե, իսկ Փայլակ... իր տգիտությունը մինակ: Ուրեմն նոր եղանակ.-Ցնծապատարին «պատար»-ը պատարիմ բային արմատն է. պատարիմ կը նշանակե լեցուն ընել, առատացնել, ուրեմն՝ ցնծապատար՝ կը նշանակե ցնծությամբ պատարուն, լեցուն, եթե Փայլակ դասառության պետք չունենար՝ ավելորդ պիտի ըլլար ըսել թե ո՛չ մեկ առնչություն կա ցնծապատարին պատար վերջավորության և լեղապատառին պատառին հետ, Ռայով՝ պատառ՝ իր պարզագույն նշանակության մեջ, որով լեղապատառ կը նշա-նակե լեղին պատառ պատառ եղած...»(274):

Նույն «քննադատները», Մեծարենցի անձն ու գործը նշավակելուց զատ, պանծացնում, գովաբանում էին հեղինակների, որոնց անուններն այսօր շատ քչերին են ծանոթ: Դրանցից մեկը Մերուժան Պարսամյանն էր, որը 1907-ին տպագրում է իր բանաստեղծական ժողովածուն: Այս փոքրիկ ժողովածուն հրատարակվում է իբրև «Մասիսի» Մատենադարանի առաջին հատոր, Մեծարենցի «Ծիածանի» փոխարեն, և իր «ճոզած հայերենով» հայտնի ազդն էլ Ենովք Արմենը զետեղում է այս գրքի սկզբում: Բացի դրանից, նա Պարսամյանի բանաստեղծությունները տպագրում է «Մասիս» հանդեսի էջերում, իսկ դրանցից մեկի՝ «Տալիթա, Կո՛ւմի...»-ի առիթով խմբագրության անունից նշում է. «Պարսամյան, - նոր սերունդի բանաստեղծներուն ամենեն արվեստագետներեն մեկը, որուն քնարը կորովի շեշտը ունի հուզիչ զգայություններու, - իր «Տալիթա, Կո՛ւմի...»-ով՝ սկզբնավորությունը կ'ընե մասնավոր սեռի մը վրա քերթվածներու շարքի

¹⁴ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. II, Ե., 1972, էջ 458:

մը, զոր հաջողապես մշակել կարենալու ամեն հավաստիք կը ներշնչե իր առաջին քերթ-վածով իսկ»¹⁵:

Սակայն յուրաքանչյուր ընթերցողի համար կարող է պարզ լինել, որ խմբագրի գովեստը, մեղմ ասած, իրականությանը չի համապատասխանում, և որ շատ հաճախ Պարսամյանի ոտանավորները պարզունակ արձակից չեն տարբերվում, ինչպես.

Ինչպէս գիտես գեղադէմ կնոջ մը հետ ոսկեհեր
...Ամուսնացած եմ վերջերս, հարուստ է ան ու աղուոր:
Երբոր կիներս կը գովեմ, օ՛հ, հաւատա՛ իրաւ որ,
Անկեղծութեան համար է, եթէ ոչ բնա՛ւ չի վայելեր...¹⁶

Պարսամյանը նաև փորձեր էր անում Աստվածաշնչում նկարագրված զանազան դեպքեր չափաձոյի վերածելու, և դարձյալ Մեծարենցի ձայնը բարձրանում է գեղարվեստական ու լեզվական խեղաթուրումների դեմ, և «Քննադատությունը» հող-վածում նա գրում է. «Պարսամյան նոր սեռ մը փորձած ըլլալ կը կարծե, աստվա-ծաշնչական կարգ մը անցքեր իր կաթոս զգացումներով մակարդելով: Ունինք իր վերջին ոտանավորը (Մասիս, թիվ 28-29), «Դալիլա», որ չարափոխումն է Աստվածաշունչին մեծավայելուչ պարզությամբ ու հանդարտ խաղացքով վիպերգության: Հետաքրքրական պիտի ըլլար բաղդատությունը՝ ուր երևան պիտի գա գրականեն զատ լեզվական պղծագործությունն ալ՝ զոր կ'ընէ Պարսամյան իր կոշկոռ կապած հայերենով» (259-260):

Ինչպես կարելի է եզրակացնել այս համառոտ քննությունից, արևմտահայ ականավոր քնարերգու Միսաք Մեծարենցը մայրենի լեզվի հանդեպ դրսևորել է նախանձախնդիր ոգի և անսահման սեր: Լինելով լեզվի մաքրության ջատագով՝ միշտ ընդվզել է ժամանակի «նորաձև» հոսանքների դեմ, որոնք փորձում էին հայերենը վե-րաձևել եվրոպական լեզուների ազդեցությամբ, կատարել տեղի-անտեղի փոխա-ռություններ՝ աղճատելով լեզվի նկարագիրը: Բանաստեղծը գրաբարը դավանել է իբրև «գեղեցկագիտության անսպառ աղբյուր», և իր բազմաթիվ քերթվածների հմայքն ու գե-ղեցկությունը պայմանավորված են հազվադեպ գործածական, հատկապես գրաբարյան բառերի ու ձևերի առկայությամբ: Մեծարենցն առանձնացել է խոր լեզվախմացությամբ, հզոր լեզվամտածողությամբ և նուրբ լեզվագագացողությամբ, որոնք, ավելի ու ավելի ներդաշնակելով ստեղծագործության ձևն ու բովանդակությունը, նրա արվեստը հասցրել են կատարելության:

¹⁵ Մասիս, 1907, - 24, էջ 488:

¹⁶ Մեղուժան Պարսամյան, Պատրանքի ծաղիկներ, Կ. Պոլիս, 1907, էջ 68:

МИСАК МЕЦАРЕНЦ О ЯЗЫКЕ**АРАКЕЛЯН К. Л.****Резюме**

Будучи поборником чистоты языка, Мисак Мецаренц отвергал попытки некоторых “литературных деятелей” обогатить армянский путем неоправданных заимствований из европейских языков, что было чревато искажением родного языка, являющего собой, говоря словами поэта, “неисчерпаемый источник красноречия”. Красота и неповторимость его поэтических образов обусловлена именно использованием пластов родного языка и обращением к лексике грабара (древнеармянского языка).

MISAK METSARENTS ABOUT LANGUAGE**K. ARAKELYAN****Abstract**

Being an apologist of pureness of language Misak Metsarents rejected the attempts of some “literary figures”, who turned to reshape the Armenian under the influence of the European languages, which was fraught with serious distortions of mother tongue. Metsarents considered our wonderful Old Armenian as an “inexhaustible source of eloquence”, and the beauty and charm of his many poems are closely connected with the use of rarely meeting, especially Old Armenian words and forms.